

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
պարոն ՀՈՎԻԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Արրահամյան

Հայաստանի Հանրապետության կառավարությունը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավոր Էդմոն Մարուքյանի՝ օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացրած «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (Պ-367-16.10.2013-ՊԻ-010/0) վերաբերյալ սկզբունքային առարկություններ չունի:

Միաժամանակ օրենքի նախագծի 1-ին հոդվածում նշված «պարբերությունը» բառն անհրաժեշտ է փոխարինել «մասը» բառով՝ նկատի ունենալով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 41-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջները:

Օրենքի նախագծի ընդունման դեպքում Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման կամ այլ իրավական ակտի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

Կից ներկայացվում են օրենքի նախագծի կարգավորման ազդեցության գնահատման եզրակացությունները:

Հարգանքով՝

ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ

ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

**«Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» Հայաստանի
Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի
Հանրապետության օրենքի նախագծի ընդունման դեպքում**

«Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» Հայաստանի
Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության
օրենքի նախագծի ընդունումն առողջապահության բնագավառի վրա ազդեցություն չի ունենա:

Եզրակացություն

**«Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքում
լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ սոցիալական
պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատման**

«Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքում
լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի (այսուհետ՝ նախագիծ) սոցիալական
պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատումը կատարվել է
«Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 27.1 հոդվածի և ՀՀ Կառավարության 2010 թվականի
հունվարի 14-ի թիվ 18-Ն որոշման համաձայն:

Նախագծի սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության
գնահատումը կատարվել է սոցիալական պաշտպանության ոլորտի և դրա առանձին
ենթաօլորտների իրավիճակի բնութագրիչների և դրանց ինդիկատորների հիման վրա:

Նախագիծը՝

ա) ռազմավարական կարգավորման ազդեցության տեսանկյունից ունի **չեզոք
ազդեցություն**.

բ) շահառուների վրա կարգավորման ազդեցության տեսանկյունից ունի **չեզոք
ազդեցություն**:

ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

**«Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» Հայաստանի
Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի
Հանրապետության օրենքի նախագծի բնապահպանության բնագավառում
կարգավորման**

1. «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (այսուհետ՝ օրենքի) ընդունման արդյունքում շրջակա միջավայրի օբյեկտների՝ մթնոլորտի, հողի, ջրային ռեսուրսների, ընդերքի, բուսական և կենդանական աշխարհի, հատուկ պահպանվող տարածքների վրա բացասական հետևանքներ չեն առաջանա:

2. Օրենքի նախագծի չընդունման դեպքում շրջակա միջավայրի օբյեկտների վրա բացասական հետևանքներ չեն առաջանա:

3. Օրենքի նախագիծը բնապահպանության ոլորտին չի առնչվում, այդ ոլորտը կանոնակարգող իրավական ակտերով ամրագրված սկզբունքներին և պահանջներին չի հակասում:

Օրենքի կիրարկման արդյունքում բնապահպանության բնագավառում կանխատեսվող հետևանքների գնահատման և վարվող քաղաքականության համեմատական վիճակագրական վերլուծություններ կատարելու անհրաժեշտությունը բացակայում է:

**ՀԱԿԱԿՈՒՌՈՒՊՑԻՈՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ**

**«Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին»
Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին»
Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ**

«Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծն իր մեջ Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի հոկտեմբերի 22-ի «Նորմատիվ իրավական ակտերի նախագծերի հակակոռուպցիոն բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման իրականացման կարգը հաստատելու մասին» թիվ 1205-Ն որոշմամբ հաստատված կարգի 9-րդ կետով նախատեսված որևէ կոռուպցիոն գործոն չի պարունակում:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի տնտեսական, այդ թվում՝ փոքր և միջին ձեռնարկատիրության բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման

«Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) գործարար և ներդրումային միջավայրի վրա կարգավորման ազդեցության գնահատման նպատակով իրականացվել են նախնական դիտարկումներ:

Գնահատման նախնական փուլում պարզ է դարձել, որ Նախագծով կարգավորվում են սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հերթական և արտահերթ ժողով հրավիրելու հետ կապված իրավահարաբերությունները, մասնավորապես՝ առաջարկվում է սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հերթական և արտահերթ ժողով հրավիրելու հնարավորություն ընձեռել առնվազն 20 փոկոս բաժնեմաս ունեցող մասնակիցներին և Նախագծի ընդունման դեպքում, դրա կիրարկման արդյունքում գործարար և ներդրումային միջավայրի վրա ազդեցություն *չի նախատեսվում*:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի մրցակցության բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման

«Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծով (այսուհետ՝ Նախագիծ) նախատեսվում է կարգավորել սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների հերթական և արտահերթ ժողով հրավիրելու հետ կապված իրավահարաբերությունները:

Նախագծով կարգավորվող շրջանակները չեն առնչվում որևէ ապրանքային շուկայի հետ, ուստի և Նախագծի ընդունմամբ որևէ ապրանքային շուկայում մրցակցային դաշտի վրա ազդեցություն չի կարող:

Հիմք ընդունելով նախնական փուլի արդյունքները՝ կարգավորման ազդեցության գնահատման աշխատանքները դադարեցվել են՝ արձանագրելով Նախագծի ընդունմամբ մրցակցության միջավայրի վրա *ազդեցություն չհայտնաբերվելու* եզրակացություն:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի բյուջետային բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման վերաբերյալ

Նախագծով առաջարկվում է սահմանել, որ սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հերթական ընդհանուր ժողով և (կամ) արտահերթ ընդհանուր ժողով հրավիրելու իրավասություն կարող են ունենալ նաև առնվազն քսան տոկոս բաժնեմաս ունեցող մասնակիցը կամ մասնակիցները:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ գտնում ենք, որ նախագծի ընդունման ազդեցությունը պետական բյուջեի եկամուտների վրա կլինի չեզոք:

ՆԱԽԱԳԻԾ

Պ-367-16.10.2013-ՊԻ-010/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

«ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության 2001 թվականի հոկտեմբերի 24-ի ՀՕ-252 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 37-րդ հոդվածի 1-ին պարբերությունը լրացնել հետեյալ բովանդակությամբ նոր նախադասությամբ.

«Հերթական ընդհանուր ժողով կարող է (են) հրավիրել նաեւ առնվազն 20 տոկոս բաժնեմաս ունեցող մասնակից(ներ)ը»:

Հոդված 2. Օրենքի 38-րդ հոդվածի 2-րդ մասը լրացնել հետեյալ բովանդակությամբ նոր նախադասությամբ.

«Արտահերթ ընդհանուր ժողով կարող է (են) հրավիրել նաեւ առնվազն 20 տոկոս բաժնեմաս ունեցող մասնակից(ներ)ը»:

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Հիմնավորում

«Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի ընդունման

1.1. Իրավական ակտի անհրաժեշտությունը. Սույն նախագծի ընդունումը պայմանավորված է սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասնակիցների ընկերության կառավարման իրավունքը կարգավորելու անհրաժեշտությամբ:

1.2. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը եւ առկա խնդիրները. Սույն օրենքում առաջարկվող լրացումները նպատակ ունեն ապահովել օրենքի 12-րդ հոդվածով սահմանված իրավունքները, մասնավորապես, մասնակցի՝ ընկերության կառավարմանը մասնակցելու իրավունքը: Սույն օրենքի 35-րդ հոդվածի համաձայն՝ ընկերության բարձրագույն մարմին է հանդիսանում ընդհանուր ժողովը: Բարձրագույն մարմնի կողմից կառավարում կարելի է իրականացնել հերթական կամ արտահերթ ընդհանուր ժողով հրավիրելու միջոցով: Սույն օրենքի 37-րդ եւ 38-րդ հոդվածներում արտահերթ եւ հերթական ժողովի հրավիրման իրավունքը վերապահված է գործադիր մարմնին: Այսինքն գործադիր մարմնի կամքից է կախված մասնակցի՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված լիազորությունների իրականացումը: Գործող խմբագրությամբ պրակտիկայում ստեղծվել է մի իրավիճակ, երբ 90 տոկոս բաժնեմաս ունեցող մասնակիցները ցանկություն ունեն ժողով հրավիրելու, բայց գործադիր մարմինը պարզապես ժողով չի հրավիրում: Մասնակիցներին մնում է դիմել դատարան՝ տնօրենին ժողով հրավիրելուն պարտավորեցնելու հայցով, բայց այդ դեպքում ժամանակի կորստի հետեւանքով ընկերությունը կարող է կրել անդառնալի կորուստներ:

1.3. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները. Նախագծով առաջարկվում է օրենքի 37-րդ եւ 38-րդ հոդվածները լրացնել այնպես, որ սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հերթական եւ արտահերթ ժողով հավիրելու իրավունք ունենա նաեւ առնվազն 20 տոկոս բաժնեմաս ունեցող մասնակից(ներ)ը:

2. Կարգավորման առարկան. Նախագծի կարգավորման առարկան են սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հերթական եւ արտահերթ ժողով հրավիրելու հետ կապված իրավահարաբերությունները:

3. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը. Նախագծի ընունման արդյունքում սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության ժողով հրավիրելու իրավունք կունենան նաեւ ընկերության առնվազն 20 տոկոս բաժնեմաս ունեցող մասնակիցները: